ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 Է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

08.09.2015թ
260-ի 3

ՀՀ տարածքային կառավարման և
արտակարգ իրավիճակների նախարար
պարոն Արմեն Երիցյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Երիցյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի (http://www.ogp.am/u_files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի տասներորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2015 թ.-ի փետրվարից մինչև օգոստոսի 31-ը քանի՞ հանրային ծառայող է վերապատրաստվել Տեղեկատվության ազատության և կամ կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով:
2. Խնդրում ենք տրամադրել տեղի ունեցած վերապատրաստման մասին տեղեկություններ՝ ամսաթիվ, մասնակիցների քանակ, ուսուցանողներ:
3. Արդյոք, համաձայն պարտավորության մեջ նշված գործողության, յուրաքանչյուր դասընթացից հետո լրացվե՞լ են հարցաշարեր: Եթե այո, խնդրում ենք տրամադրել դրանց պատճենները:

Տեղեկատվությունն առավել արագ տրամադրելու համար, հնարավորության դեպքում, խնդրում ենք հարցման պատասխանն ուղարկել ԻԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ foi@foi.am:

Կանխավ շնորհակալ եմ:
Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ